


բաղդարաբ' սամավարը միայն փայտի ածուխով կը վառուի. և մենք փայտի հետքն անզամ չգտնելով հոն՝ կը բռնադատուինք նա. նապարհորդութեան համար հետեմնիս ունեցած ծալլուող աթոռներուն սուքերը վառելի փայտի տեղ գործածել: Տեսնելու էր թէ որ պիտի ինչայութեամբ և խնամքով այս հապտապիւս փայտերը կը գործածէր Գէորգ-ինչուան թէ խմելէն ալ ինքզինքը կը զրկէր: Ինչուան հիմայ ըստծներնէս բաւական կը

հասկըցուի թէ հանդական կողմ մը շունի Արկուտի. կը թողունք ըսել թէ քնակիչքն ալ բարի համար մը չեն վայելեր: Սահմանազլխոյն թափառականներուն հետ խօսքը մէկ ըրած՝ զխաւոր գործերնին և պարսպմունք՝ մաքաննեղութիւնն է կ'ըսեն. մեզի ալ ընդունելութիւն մը ցոյց չտուին և ոչ համակրութիւն մը, ինչ որ ուրիշ տեղուանք ալ մենեւին չէր հանդիպած մեզի:

(Շարայարեի)

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՔԱՐՈՋԱԾ ԱՊԱՀԱՐՁԱՆ



ԵՐ ազգի մէջ հրապարակաւ որ և է խնդրի յուզեցաւ, իսկոյն մեր բոլոր կատարելութիւնքն յայտնի կը լինին:

Հայրենիք վերջերս սկսաւ ջերմապէս պաշտպանել ապահարգանք—իւր բառով ամուսնացածորսին. — և ահա յուռեցաւ տեսակ մի հայ երիտասարդութեան ձայնը. անոնց մին գրեց. « Հաւատացէ՛ք թէ հանրային միտքը առ հասարակ կը հակի ամուսնալուծութեան պաշտոնապէս մեր մէջ ընդունուելուն կողմը », որ է « Հայրենիքի քարոզած մարդասէր սկըզբունքը » (1). և թէ մի ստուար խմբի մէջ երկու հոգի միայն հակառակի են ապահարգանին: Այդ իմացանք. և իմանալու համար թէ մեր մէջ ողջ երիտասարդութիւնն ալ կայ, — և չենք տարակուսիր թէ կայ, — գեռ չսեցինք ասոնց ձայնը: Երկրորդ, տեսնուեցաւ որ մեր մէջ աշխարհականն է եկեղեցական օրինաց մեկնիչ... Իւր հեծոյից համեմատ: Երրորդ, իմացանք՝ որ եկեղեցին պարտաւոր է եզեր վաւերացնել « ինչ որ կը փափաքի ժողովուրդը ». իբրև թէ ոտներն ըսէին զըլխոյն. մենք ուր կ'ուզենք, հոն պարտիս առաջնորդել մեզ. — անյուշտ կը ներէ Հայրենիք մեր այս բացատրութեան: — Չորրորդ, տեսանք՝ որ հայ վիճակաւորք այդ չաւատակութեանց առջև իրենց չրթները սոսնձով կպուցած մնացին. և մանաւանդ լսեցինք՝ թէ « ար-

դէն կղերին յուսամիտ մասը գործնականին մէջ թողատու ոգի մը ցոյց տալ սկսած է վերջին տարիներս » (2). և մնացեր է մի սակաւաթիւ մասն՝ որ Հայրենիքի դէմ ուրիշ պատասխան չունի հղեր, բայց միայն՝ « Չորս Ատուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեցէ » (3):

Եւ Հայրենիք իբր մի անկատու տան մէջ կը կայթէ և կը պարէ ըսելով. երկիւղ չունիմ. իմ դէմ մաքառող ձանձ մ'ալլ չկայ: Ամէն օր քաջալիբական նամակներ կ'ընդունի « զաւուսական քաղաքներէ, որոց անունք փափկանկատութիւնն իրեն կ'արգիլէ յայտնել ». և թէ ինքն անոցմէ կարևորները միայն կը հրատարակէ եղեր, զանունք՝ որ իւր կարծեսցէ ձեռք կու տան, գրուած լինելով այնպիսի անձերէ՝ որք « անձնապէս զոհ եղած են ամուսնական շղթաներուն », և որոց մթաղ նած աչերուն այդ պայմանի մէջ քնականապէս երջանկութենէ զատ ուրիշ բան չերևիր ապահարգանի մէջ, և ամուսնութեան անուժութեան մէջ ամենայն շարիք. և ահա այդ պիտեաց ըրած ողջմիտ և անկողմնակալ գատաստանաց գլուխ պիտի խոնարհէ եղեր հայ ազգը:

« Եթէ պատահին, կ'ըսէ Հայրենիք, անարգար քննադատութիւններ... ճամարտութիւնը, ինչպէս յայտնի է, շատ (միայն շատ) զբերին չէ գտնել և ոչ մէկ ճիւթի մէջ՝ առանց սխալմունքի և խարխալումի »: (4) — Այդ վեր-

1. Հայրենիք, 23 մարտի:

2. 5 մայիսի. — 3. 14 մարտի. — 4. 4 մայիսի:

Հին երկու բառից մտտ ինչու չէ յաւելած
յարեթական բառն այլ. արդեօք գրաբար բան
էր՝ անոր համար:

Մտազանք խոնարհարար խնդրել Հայրե-
նիքէն որ մեր այս խնդրոյս մէջ մանկերու յաւ-
ակնութեան ներք մեզ որովհետև ինքն հաս-
մարձակութիւն տուաւ մեզ ընտելով. « Հայրցը
բոլոր հայ ընկերութեան վերաբերեալ ընկեր-
րական հարց մըն է »: Իրպէս չենք համար
ձակիր չափել զմեզ իւր հետ ազգասիրութեան
և ազգօգուտ գործօնէութեան մէջ. բայց զէթ
իւր ըսած « բոլոր հայ ընկերութեան » մէջ
գտնուելու շնորհը կ'ընէ մեզ անշուշտ իւր սիծ
բարեբաւութեամբ:

Գարձնայ հարկ կը համարինք յիշել՝ թէ
Հայրենիք երկու տեսակ լիցու ունի, բնական
և անբնական: Եթէ գրէր նա իւր բնական
լիցուով, մեր հայիւը շատ դիրքին կը լինէր,
երկու խօսքով կը պատասխանէինք: Եւ ու-
րովհետև անբնական լիցուով կը գրէ, այս-
ինքն՝ միամիտ ժողովրդեան այլք շլացնելու
համար իւր խօսքի մէջ խառնելով քանի մի
իրեն անտեսութ անուններ — և լսկ անուն-
ներ — ինչպէս անտարան, Փոցու արաքեայ,
հայրապետներ և այլն, և երբեմն ալէն գէտ
ի ձախ կարգացուած մէկ երկու վկայութիւն,
մենք այլ ստիպուած ենք այդ անուններով
պատասխանել իրեն:

Յարգ Հրատարակած յօդուածոց մէջ Հայ-
րենիք այս կարծիքները յայտնած է: Աւա-
լին՝ թէ «. դիրք ապահարգանի հակառակ
չէ: Երկրորդ՝ թէ հայ եկեղեցին ընդունած
է ապահարգանք: Երրորդ՝ թէ կղերն իրա-
ւունք չունի խառնուելու ամուսնական խնդրոց
մէջ. և իրաւունք կը ստանայ այն ժամանակ,
երբ յանձն առնու ժողովրդեան կամաց հա-
մեմատ գործել: Գորրորդ՝ թէ հարկաւոր և
օգտակար է ապահարգանք: Այդ բոլորը մենք
այլ տեսնենք Հայրենիքի հետ:

Ա. Հին սրբազան աւանգութիւնը, — եթէ
թոյլ կու տայ Հայրենիք այսպիսի մեր « ա-
մենուն մտքին վրայ ծանրացած կանխակալ
կարծիքներու » (1) հաւատարմութիւն, — կը պատմէ՝
թէ դերբայոյն արարիչն և հաստատողն զմարդ
և դամուսնութիւն՝ մի միայն կին ստեղծեց
և տուաւ առաջին մարդոյն, բոլոր կեանքն
անոր հետ անցնելու համար. թէպէտ և այդ
կին յետոյ իւր ամուսնոյն բարեան և կամ
ծայրագոյն չարեան և արհաւիր պատճառ լի-
նի, ինչպէս եղաւ իսկ Չատեղծեց Աստուած
Ազգամայ համար քանի մի կին, միոյն հետ
չյարմարելու ժամանակ՝ միւսոյն հետ կենակա-

ցելու: Եւ ապա յարեց այս պատուիրանը.
« Թողցէ այր զհայր իւր և զմայր իւրս և
երթիցէ զհետ կնոջ իւրոյ, (մեր ազգի հին վար-
դապետաց մին Հայրենիքի ակամալէն կը ժըս-
տայ « և ոչ զհետ կանաց ») և եղիցին երկուքն
(և ոչ երեքն կամ աւելին) ի մարմին մի »: Այդ
միութիւնն, այնքան սերտ և բնական, հարկ
եղաւ արարչին ակամայ թուացնել առ վայր
մի հրէից նման վայրենաբարոյ կամ խառա-
սիրտ ազգին համար: Բայց յետոյ երբ նո-
րոգեց կամ վերստին ստեղծեց զմարդկոց
թիւնը, յեղեցոյց՝ թէ « ի սկզբանէ ոչ եղև
այնպէս », բաժանման կանոն կամ սովորու-
թիւն. և նոյն աստուածային բերանով կրկի-
նեց այն կնիւտուրց պատուէրը — և ոչ նոր
օրէնք դնել համարեցաւ. — և յաւելցուց.
այն զոր արարիչը մի ըրաւ, մարդ թող չհաս-
մարձակի բաժնել. « Չոր Աստուած զուգեաց՝
մարդ մի մեկնեցոց ». և Աստուծոյ զուգած
լինելուն յայտնի նշանն է երկու կողմանց
հաւանութիւնն ամուսնութեան ժամանակ, և
չքութիւնն այն հանգամանաց, որք ամուսնու-
թիւնը առաջին վայրկիւնէն անվարկ կ'ընեն,
բաւ որում անոցմով կատարուած՝ ամուսնու-
թիւնն Աստուծոյ զուգածը չէ:

Նորոգեց բոլիք՝ հին կարգը. ապա ինչպէն
առաջ ինք թուրացոյց զայն, այսպէս և այժմ
եթէ հարկ լինի, նոյն օրէնքորին կ'ընենի
թուրացնել վերստին հաստատածը, եւ ոչ մարդ-
կան: Բայց այս անգամ այնպէս պնդեց, որ
յարհոտեան անլուծանելի բրաւ զայն, իւր ընդ
եկեղեցւոյ անբաժան միութեան օրինակ հաս-
տատելով (2): Եւ չբանականացար մի անգամ
ըսելովն. այլ կրկնեց և երեքկնեց ու չորեք-
կնեց և վերջապէս վեց անգամ ըսաւ նոյնը
երեք աւետարանչաց և հեթանոսաց առաջե-
լոյն բերանով:

« Ամենայն որ արձակէ զկին իւր, և ոչ
կանս պտնակութեան, և ասնիցէ այլ, շնայ,
և որ զարձակեալն առնէ՝ շնայ » (3):

« Եթէ այր արձակեցէ զկին իւր, և ա-
րացեց այլ, շնայ. և կին եթէ լիցէ յառնէ
իւրով, և եղիցի ասն այլուս, շնայ » (4):

« Ամենայն որ արձակէ զկին իւր և առնէ
այլ, շնայ. և որ զարձակեալն առնէ, շնայ » (5):

« Կանամբեացն պատուիրեմ, որ ես՝ այլ
Տէր, կեոյ յառնէ մի. մեկնել. ապա եթէ
մեկնեսցի (բաւ թոյլտուութեան Քրիստոսի),
անայր մնացեց, կամ անգրէն ընդ առն իւ-
րում հայտնեցի. և ասն՝ զկին իւր մի թոս

դուր... կին կապեալ է՝ ցորչափ ժամանակս կենդանի է այր նորա» (1) :

« Կին առնակին ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինք . իսկ եթէ մեռանիցի այրն, արձակեալ է յօրինաց առնն » (2) :

Եւ համառօտելով այդ օրէնքները, կը տեսնենք ահա՛ որ Մարիոս և Ղուկաս անբաժանելի կը դնեն զամուսնութիւնն անպայմանաբար, այսինքն լռելով պայմանը՝ և ոչ ժխտելով : Մատթէոս՝ ամուսնակցի անհաւատարմութիւնը բաժանման մի պայման կը նկատէ : Իսկ Պաղոս այդ բաժանմանէ վերէն այլ տակաւին անլուծանելի կը քարոզէ պսակը, մինչև ցմառ ամուսնաց մղոյն :

Հայրենիք այսչափ աստուածադիր խիստ կանոնաց մի շարք կարծեմ՝ տեսած չունէր իւր բովանդակ կենաց մէջ . նա միայն լսած էր « հայ կղերին... աւանդական Չոր Աստուած գոռոցան հին երգը, երգ մը՝ « րայիկ հին նոյն շափ տաղտկալի և աննպատակ » (3), ինչպէս կը գրէ իւր Թղթակիցը : Ենք տարակուսիր՝ թէ միւսներն այլ այս երգի ստացած պատուոյն արժանանան, մինչև որ անոնց փոխան չսկսինք երգել « Կերիցուք և արբցուք՝ զի վաղիւ մեռանիք » երգը :

Եւ երբ իբր երկու ամիս առաջ սկսայ Հայրենիքին ապահարզանի յօգուածները կարգալ, նոստման և մեծաշառայ յօգուածները : Յ. Եաննողարի գրածին մէջ պատահեցաւ ինձ մի այնպիսի հզօր փաստ իրենց կարծեաց նպատարնոր՝ որ բերանս փակ մնաց : « Աւելորդ սեպեցինք, կ'ըսէր, փաստեր յառաջ բերել Աւետարանէն, Պօղոս առաքեալէն, հայրապետներու գործերէն » (4) ապահարզանը հաստատող . այնպէս՝ իբրև թէ մենք ըսէինք : « Աւելորդ կը սեպեցէք փաստեր յառաջ բերել Հայրենիքէն՝ ապահարզանի դէմ... որովհետև չեն գտնուիր : Ի՛հ, Բ՛նչ ընես . այդ պատճառաբանելու եղանակը կը ըլլի ձայրենիքի այն ղեկերական իմաստասիրութենէն (5), որոյ մէջ Արքիարի « մտքէն շանց ներ » — և իրաւունք սենի չանցնելու — թէ բաց ի Հայրենիքէն կարենայ այլ զք « համաձայն գտնուիլ միշտ առաջ երթալու հետամտող (միայն հետամտող Հայրենիք) մասունիկն հետ » (6) :

Եր. Օտեան մայիսի մեկին հրատարակեց այս կէս կալպուսնիտեսան ճառը « Ամուսնութիւնը ս. գրքին մէջ » վերնադրով, որոյ երկ կրորդ մասն դեռ չտեսանք, և կը փափաք

ընք բնաւ չտեսնել : Եւ կը գրէր . « Ամուսնութիւնը հաստատուեցաւ դարաւորին մէջ, երբ Աստուած Արամն ու Եւան օրհնելով ըտաւ : « Անցե՛ք ու շատցե՛ք... Արամ Եւան ունեցաւ միայն իրեն կին... սակայն շատ շուտ բազմակնութեան օրինակ մը կը տեսնենք՝ նոյն իսկ Աշամի կենդանութեան առնէն, (զո՞ւ հո՞ն էիր), Ղամբը՝ որ « իրեն երկու կնիկ առաւ... Ալ անկէ ետքը այդպէս յարունակուեցաւ... « Աստուծոյ որդիքը մարդոց աղիկներուն զեղեցիկ ըլլալը տեսնելով, աճէն իրենց ընտրածներէն իրենց կնիկներ կ'առնէին », Այդ ժամանակներու մէջ զեռ ամուսնութիւնը խորհուրդ մը չէր, (բայց և ոչ Աստուծոյ սահմանածին պէս) . ո՛չ ալ որ և է օրէնքներ կալիպնդած էին տարբերութեան միութիւնը . (անշուշտ խառն միութիւնը կ'ըսես . որովհետև օրինաւոր միութիւնը ոչ մի ժամանակ կաշկանդուած չէ) » « Անցե՛ք և շատցե՛ք... ահա ամուսնութեան միակ (7) պատուիրանքը » :

Յետոյ յիշելով Օտեան իտրայելացոց բուր նաշակետայ քնքիշխան և բազմակին ամուսնութիւնը՝ կը յաւելու . « Ամուսնութիւնը ս. գրքին մէջ նկատուած է իբրև բընական օրէնք մը և պէտք մը... լոկ աշխարհային խնդիր մը, որուն համար երբէք Եւսովան սիրտ հատցուցած չէ » :

Հուսամիտ Օտեան, « անցե՛ք ու շատցե՛ք » պատուէրը Աստուած անասնոց այլ տուաւ . անոնց համար այդ էր « միակ պատուիրանքը » : Բայց ուղեով որ Օտեանի և անասնոց ամուսնութեանց մէջ տարբերութիւն լինի, — աչք ս. գրոց մէջ վերոյիշեալ պատուիրանին շուրջ գործուր, և պիտի տեսնես որ այս պատուէրն այլ տուաւ առ մարդն, թէ այրն « երթիցէ զհետ (միտ) կնոջ իւրոյ, և եղիցին երկուքն ի մարմին մի », ինչ որ արդէն յիշեցինք . մինչ անասնոց մի մի ընկեր շահմանեց, և ոչ լոկ երկուց միութիւն : Գուց ոսվոր էք ամեն ինչ՝ որ ձեզ աննպատակ է կէս կարգալ, և այդ կէսը միակ համարել, որ նշան է ձեր ճշմարտախոհութեան և խոր իմաստասիրութեան :

Երբ ժամանակ կատարուած խառն ամուսնութիւնը այնչափ բնական՝ և որ և է օրինաց կալիպնդուածներէ ազատ էին, որ իրենց զեղաւ պատժուեցան — եթէ կը հաճէք հաւատալ . — և այդ տեղ և այլ նման դիպաց մէջ « Եզովման սիրտ հատցուցած չէ » . քանզի

Օտեան բաւական քալարտութիւն ունեցեր է մէկ կէտի մէջ Հայրենիքի իմաստասիրութիւնէն գարտուղելու և շնորհալ՝ թէ Մովսիսէ առաջ մարդ կարող էր իւր առաջին առած կնիք, որ էր իւր միակ ամուսին, ար-

1. Ա կոր. է 10, 39. — 2. Հ. ա. է 2, — 3. Հայրենիք. և մայիսի. — 4. 14 մարտի. — 5. 20 մարտի. — 6. 22 յունուարի : —

ձակել և մերժել. այլ միայն կ'արձակէր հար-
աները, որք զուրկ էին օրինաւոր և միակ կը-
նով ամէն իրաւունքներէ. և վերջապէս ա-
մուսնի չէին, այլ մարդկային զեղծման և
Քուլտութեան հնարք, զէթ հարճութեան սկիզ-
բը:

Բայց նա նախաքրիստոսեանց այդ բազ-
մակնութեան վերայ այնպիսի ոճով կը խօս-
սի, որ կը վախենք՝ թէ ապահարզանի շատա-
քովք սկսին զայն ևս քարոզել և պաշտպա-
նել... Արդէն առանց աղոր իսկ՝ անոնց քա-
րոզած ապահարզանն ուրիշ բան չէ, բայց
թէ բազմակնութիւն կամ բազմայրութիւն,
ոչ միանգամայն՝ այլ յաղորդաբար. որովհե-
տեպսակի լուծման օրէնքն ընդունուելէ վերջ,
իւրաքանչիւր մարդոյ ձեռքն է այնուհետեւ
ամուսին փոխել՝ քանիցս անգամ առիթ կան-
դիպի, կամ ինքն իսկ հանդիպեցնէ իւր ու-
րած ժամանակ:

Բ. Հայրենիքի մէջ շատ անգամ կարդա-
ցինք այսպիսի բացատրութիւններ. «մեր ե-
կեղեցիին իրաւասութեան ամենաընդարձակ
սահմանին մէջ գտնուող ամուսնական օրէնս-
դրութեամբ է՝ որ մենք հայերս...» (1).
«դարձեալ՝ «հայ ամուսնական վիճակը» (2),
և այլն: Մինք ոչ ինչ չհասկանալով այդ լե-
զուէն, հարցուցինք մեր ամենէն աւելի լու-
սամիտ Հայրապետներէն միոյն, Գրիգոր Տը-
ղայի. որ պատասխանեց. «Չայս և ոչ ուս-
տեք լուսք՝ եթէ պատուիրեաց մեզ զքի սըր-
բոցն՝ եթէ այլ Քրիստոս էր որ յաղագս
հայոց եկն, և այլ որ յաղագս հառտոց, և
այլ որ յաղագս Ֆրանկաց, հակառակք մի-
մեանց, այլ ես այլ պատոիրաւք» (3):

Այս, Քրիստոս մի կտակարան ունի, և ոչ
աւելի. և ով որ կը հաւատայ Քրիստոսի,
պարտի իւր կտակարանի բոլոր պատուէր-
ները պահել. անոնց սոսկ միոյն զանցառու-
թիւնն օւրացումն է բուրբին (4): Այդ կտա-
կարանը չէ կարող շնորհել հայոցն կամ յու-
նին այն՝ զոր կը զմանայ ուրիշ ազգաց: Ա-
մենայն մարդ պարտի հպտատակել անոր ա-
մենայն օրինաց, թէպէտ հովուական լինի,
թէպէտ մի խեղճ հաւատացեալ: Այս է մեր
և մեր հարց քրիստոնէական իմաստասիրու-
թիւնը, այնքան տարբեր Հայրենիքի իմաս-
տասիրութիւնէն, իմացանք մենք Քրիստոսի
վարդապետութիւնը նկատմամբ ամուսնու-
թեան, վարդապետութիւն՝ յորմէ չէ կարող

խոյս տալ որ և է քրիստոնէայ. չմենք այժմ
Հայրենիքի խօսքերը:

Ե. Շահնազար՝ յետ աւելորդ համարելու
աւետարանի մէջ չգտուած և Մխիթար Գոշի
մէջ գտուած փաստերը յառաջ բերել, կը
յարե. «Այդ փաստերով պիտի պայացուցուէր
(անշուշտ ժամանակ չէ անեցած ապացուցա-
նելու) թէ քրիստոնէութիւնը ընդհանրապէս՝
և հայ եկեղեցին մասնաւորապէս ընդունած
է պսակին յոսմանկի ըլլալը» (5): Չենք հաս-
կանար, քիչ են այդ ընդհանրապէս ու մաս-
նաւորապէս այս տեղ այդի և ոչի խնդրի-
ն. կամ ընդունած են՝ կամ ոչ: Եթէ Քրի-
ստոնէութիւնը փոխանակ աւետարանի՝ Մխի-
թար Գոշի վերայ հաստատուած կը համա-
րիք, յայտնապէս ըտէք թէ ընդունած է ա-
պահարզանը. իսկ եթէ միայն զուգ էք որ
երկրորդ և բարձրագոյն Քրիստոս կը գա-
ւանիք զՄխիթար Գոշ, զձեզ մի համեմատեք
ընդհանուր քրիստոնէութեան հետ որ չհա-
նայեր զՄխիթար Գոշ:

Ե. Շահնազար կուզէ ս. գրոց և հայրա-
պետաց (որոք) խօսքերով հաստատել ապա-
հարզանը. բայց «ինչո՞ւ, կ'ըտէ, այսպիսի
ապացուցում մը ընելու յոգնութիւնը (ժայ-
ռէն չուր հանելու պէս) յանձն առնել, քանի
որ (Էմիլիանի) վերջին 4-5 կաթողիկոսեւ-
րը... տուած են զանազան ժամանակներու
մէջ այնպիսի որոշումներ՝ որոնք զէթ սկըզ-
բունքին վրայ ալ տարակոյտ մը չեն թո-
ղուր» (6): — Բայր քրիստոնէայ աշխարհ
Էմիլիանի այդ «վերջին 4-5 կաթողիկոսաց
տուած որոշումներուն» և: աւետարանական
մեկնութեանց գլուխ կը խոնարհեցնէ, որով-
հետեւ Շահնազար այդպէս կ'ուզէ... Ս.
գրոց հակապահարզան «խօսքերուն, կ'ըտէ,
կարելի չէր բացարձակ պատոիրանքի մը ի-
մաստը ընծայել: Եթէ բացարձակ ըլլային,
ոչ մէկ կաթողիկոս պիտի կրնար կրկին ա-
մուսնութիւն արտօնել, ինչ վիճակի մէջ ալ
որ գտնուէր խնդրարկու ամուսինը» (7): —
Այս հզոր պատճառաբանութեան առել մեր
միտքը կը նստահար, պարտութիւն կը խօստո-
վանի: Եթէ Էմիլիանի կաթողիկոսաւնք յան-
կարժ ըսնէ սպան, մենք պիտի համարինք
թէ ս. գրոց մի՞ սպանները բացարձակ պա-
տուիրան մի չէ. եթէ ըսնէ՝ զուսպիւր, ս. գրոց
մի՞ զուսպարը կրնանք մեկնել զուսպիւր,
և երբ կ'ըսեն՝ օրինաւոր է կրկնամուսնարկիւր,
Քրիստոսի զոր արձակի զկիև իւր և առնէ այլ
շնայ, և որ զարձակեալն առնէ շնայ» խօսքը
պէտք է հասկանալ օրինաւորապէս ամուսնա-

1. 20 մարտի. — 2. 4 մայիսի. — 3. Պա-
տասխանի վարդապետացն հայոց հեւեխային
կողմանց. — 4. Յակ. Բ 10.

5. 14 մարտի. — 6. Անգ. — 7. 21 փետր.

նայ. և առաքելոյն կայսրայը՝ լուծեալ։... Ամ միամիտներ — երբ զորք այդպէս լինել կ'ուզէք։ — Եկեղեցւոյ առաջնորդք՝ իրենք պարտին յարմարիլ աւետարանին, և ոչ թէ տակտարանը իրենց յարմարեցնել։ Երկոտասան առաքելոց երկու հազար տարուց մէջ եղած բոլոր յաջորդք եթէ միանայ, չեն կարող աւետարանի օրինաց մէկ գիրն ինկ փոխել։ Պաշտոն առաքելայն հրեշտակաց անգամ թ ոչ շատու իւր քարոզածէն աւելին քարոզել (1)։ Ընդ մնաց մարդկան։ Իրեք տակտարանին այնչափ հմուտ էք, որ անոր օրէնքները իջ միածին կաթողիկոսաց զործերէն զուր յայտնել կ'ուզէք, փոխանակ թուն ազբիւրին գիւմելուս Բայց անգամ մի մինք այլ տեսնենք այդ զործերը՝ զոր կը ցուցնէք։

Յ. Շահազար կը յիշէ՝ (2) թէ կանայք ու մանք ապահարզան պահանջեր և ընդունել են իջմիածնէ։

1. Իրենց արանց անկարողութեան համար Նա չիտիլ թէ այդ անկարողութիւնը պատկէն յոսանջ պատահած է թէ վերջը։ Իցթ յետով, յայտնի է՝ թէ լուծանելի է ամուսնութիւնը. իսկ եթէ վերջը, որովհետեւ մի անգամ եղան այդ ամուսինք «ի մարմին մի», անոր համար «կին կայեալ է՝ ցորչափ ժամանակ կենդանի է այր նոր»։ Իշ ըստ օրինաց չզործեց իջմիածին, եթէ վերջին հանգամանաց մէջ պակ լուծեց։

2. Արանց անյայտ բացակայութեան համար։ Արք այդ բացակայութեան մէջ կամ ողջ էին կամ մեռած. եթէ ողջ էին, «կին աւանակին ի կենդանի այր իւր կայեալ կայ օրինք»։ ապա չէին կարող կրկին ամուսնանալ, մինչև ստուգէին իրենց ամուսնաց մահը, թեպէտ և այդ քննութեան մէջ յանգէտս խարուէին։ Իրենց է ժողովի սահմանած յետ եօթնամեայ անյայտութեան կրկնամուսնութիւնը աւետարանի մէջ չենք զրուներ, և ոչ աւետարանի ողջոյն մէջ (3)։

3. Այդ կենդան քատուելոյ՝ զեա անկեամբ բողոքն համար. Բաց ի մահէն՝ ոչ որ կարող էր պակ լուծել ըստ առաքելոյն։

Արք ապահարզան պահանջեր և ընդունել են,

1. Կնոջ խելագարութեան համար։ Կ/նը խելագարութեամբ մեռած չլինիր. ուրեմն չէր կարող իջմիածին կենդանի ամուսնաց պակը լուծել։

2. Կնոջ անհասարակութեան համար։ Աւետարանն այս պարագայի մէջ արձակելու հրաման տուաւ. բայց առաքելայն յաւելցուց՝ թէ այդ արձակումն պակը չլուծեր, այլ մահն միայն։

Հայրենիքի մէջ (4) այս դէպքն այլ կարգացինք. Մակար կաթողիկոս մի կնոջ քրիստոնէութիւնը ուրանալու պատճառաւ՝ թոյլ կու տայ անոր ամուսնոյն՝ ուրիշ կնոջ հետ ամուսնանալ. հաւանօրէն Հիմնուած առաքելոյն այն խօսքին վերայ՝ որով թոյլ կու տայ քրիստոնէի՛ն՝ գատուիլ իւր հեթանոս ամուսնէն, երբ նա վնասակար է իւր հրօնց, և վերստին ամուսնանալ. — Այդ ապահարզանը վաւեր եղաւ. Երկու ի թե՛ն հեթանոս ամուսնաց ամուսնութիւնը կրնայ լուծուիլ միայն քրիստոնեայ ինքնօնք, որովհետեւ անոնց հեթանոսութեան մէջ կատարած ամուսնութիւնը խորհուրդ չէր, և զեւ խորհուրդ չէ՛ ցորչափ երկուցն այլ չեն դարձած ի քրիստոնէութիւն. խորհուրդն երկուց քրիստոնէութեան մէջ է միայն. և հետեւաբար վերջու շեալ ուրացեալ կնոջ և իւր առն ի սկզբան կատարած ամուսնութիւնը խորհուրդ էր։ Քրիստոնէութիւնը մեզ այսպէս կ'ուսուցանէ՝ թէ մի անգամ կատարուած խորհուրդը չլուծուի և չկրկնուի. այնպէս որ երբ մի քրիստոնեայ կամ մի քահանայ ուրանան քրիստոնէութիւնը և յետոյ դառնան, ոչ կրկին կը մկրտենք և ոչ կրկին կը ձեռնադրենք։ Նմանապէս եթէ վերջու շեալ առն ուրիշի հետ ամուսնանալէ առաջ իւր ուրացեալ կինը դառնար, առանց կրկին պակտուելոյ՝ պիտի կարենար — եթէ երկուցն այլ հաւանէին — քնակիլ իւր ամուսնոյն հետ առաջին պատկէն զօրութեամբ. նոյնը կը հաստատեն Մակար կաթողիկոսի խօսքերն այլ. Ուրեմն նոցա պակը լուծուած չէր, և եթէ լուծուած չէր, չէր կարող Մակար կաթողիկոս օտարի հետ աւետարանելու հրաման տալ այր ամուսնոյն — Եւ սակայն ճորչափ այդպիսի և աւելի սուրբ բնական գործեր կատարած է և կը կատարէ իջմիածին, որպէս կը կարդանք Արարատի մէջ. ինչպէս և ասոնց հակառակը։

Ա. Տէր Միքելեան այդ այլ այլ տեսակ ասորիներ ապահարզաններն որդարացնելու համար, առաքելոյն ըսած մի և քնական մահուան փոխան Արարատի մէջ հնարեց քանի մի տեսակ թարայական մահեր (5), Հիմնուելով Պրիգոր ասթիւացւոյն ինքնահնար վարդապետութեանց վերայ, որք աւետարանի առջև փոշի անգամ չեն արժեր։ Քրիստոս իւր վերջը

1. Պշա, Ա 8. — 2. 14 մարտի — 3. Ագոր հարազատութեան նկարագրք տես յէջ. 370, 38. 3.

« Չոր Աստուած զուգեաց՝ մտրդ մի մեկնուս յէ » , տուաւ՝ « ըստ ամենայն ֆրատու » (1) ցափքին դէմ, այսինքն որ և է յանցանաց հաճարս դուրս հանելով ամուսնական անհաւատարմութիւնը, որ ժամանակ արձակել միայն ջաւաւ, և ոչ նոր ամուսնութիւն կնքել: Այդպէս վարդապետաց առաքեալն այլ, անամուսն մնալ. այդպէս հաւատացած է Քրիստոսի եկեղեցին, այդպէս դաւանած են և ս. հարք. մանաւանդ ս. Աթանաս և Բարսեղ, որք միաբան կազաղակեն, թէ ոչ դիտահարտրեան, ոչ անդամարժոտրեան, ոչ շորտարտրեան, ոչ պոսեկտրեան, ոչ գինչ և է յարագործութեան և ոչ ամուսնաց միոյն անյայտութեան համար կրնայ լուծուիլ ամուսնութիւնը. և « այրն չիշխէ այլ կին տունել, և կինն այլ տուն չիշխէ ինեղ » (2), թէպէտ այդ հանգամանքներէն ոմանց համար իրարմէ զատուած լինին: Քրիստոսի եկեղեցին չճանաչեր այնպիսի լուծիլ պայմաններ, որք ամուսնութեան սկիզբը չկային, այլ յետոյ կը գոյանան: Այսպիսի դիպաց մէջ Աթանասի նման Հայրապետ այսպէս կը պատասխանեն. « Եւ ոչ մեք ունիմք համարձակութիւն (իշխանութիւն) յաղագս այդորիկ հրաման տալ ». և ոչ թէ Հայրապետ լինելնուն համար յալ ու ձախ վճիռներ կ'արձակեն հակառակ անտարանին »:

Ի վիճակին վճիռներու մէջ այս ևս տեսած ենք, արդար ամուսնոյն կրկին ամուսնութեան հրաման տալ, և յանցաւոր ամուսնակիցը այրեութեան դատապարտել. հաստատուելով Մ. Գոռի և Գ. տաթևեացոյն օտարբանութեանց վիրայ, որք թերևս իրենց հիմն ունեցած են Նէոկեսարեայ ժողովոյն կարծուած ժա կանոնը, թէ արդար այրն « եթէ կամեսցի կին արասցէ. բայց կինն այլում տուն չիշխէ լինել, մինչ կինդանի է այրն նորա » (3). մի կանոն, զոր ինքն իսկ հնարողը

չէ հասկացած: Իթէ անմեղ ամուսինը տակաւին այրն է այդ կնոջ, եթէ այդ կին իւր տան մահուանէ առաջ չէ կարող կրկին ամուսնանալ, — կանոնիդ երկրորդ մասն առաքելոյն խօսքն է, — ապա ուրեմն այդ կին թէպէտ մեղապարտ, սակայն միշտ կապուած է այն այրեան հետ իբր ամուսին: Ի՞նչպէս ուրեմն կարելի է անոր ամուսնանալին վերջապէս ամուսնութեան հրաման տալ, — Երկրորդ, ինչպէս կրնան մարդիկ աստուածադիր ամուսնական օրինաց դէմ մեղանշող մի ամուսին այդպիսի ցկեանս պատժի դատապար-

մինչև իսկ արտաքին ժողովոց ոմանց և օտարազգի ս. հարց ակնյայտին կանոնները մի քանի անգամ բազմապատկած կը գտնենք, և անոնց մէջ իսկականները շատ անգամ բողոքովն այլափոխուած: Նոյն իսկ յիշեալ Նէոկեսարեայ ժողովոյն տասնուհինգ կանոնք մեր գրքագրաց մէջ նոր ձևեր արձակած են, որոց մին է վերջիշխեալ կրկնամուսնութեան կանոնը, որ սկսեալ միջին դարէն՝ շատերը խաբէր է մինչև անգամ ամուսնական խնգրոց վերայ մեծ հճուութեամբ գրած համբաւեալ Ար. եպ. Աեղաքեա. նը (յէջ 165, ծն. 22), իթէ խանգարիչ օտարաց լուսոյ պէս յայտնի կանոնաց հետ այդպէս են վարուեր, կարելի է կարծել թէ ինչոյցմ լի. նին մեր ս. հարց և ժողովոց գրածներուն: Ահա վերջիշխեալ Շահապովանու ժողովոյն կանոնց՝ մէջ բնութեան և քրիստոնէութեան հակառակ այս կանոնն այլ կայ. « Եթէ որ է մծղնութեան գտցի, կամ երէց կամ սարկաւազ կամ ի շաբեղայեց, քահանայութիւնն լուծցի, և աղուեազգրոյմ ի ձակասն զիցի... ապա թէ գարձեալ է նմին գտցի, զիլսն զերկուսին կը տրեսցեն... Ապա թէ արք կանամք և որբուք գտցին յայնպէս, զարանցն և զկանանց ի զիրազեա մանկանց զիլսն կորեսցեն, աղուեազգրոյմ ի ձակասն զիցին, և ի գողեանց տացն յապաշխարութիւն »: — Այդ բոլորը միջին դարու թիւզանդամոտայ յանգուքն ձեւանդութեանց պտուղ են: Երանի անոնց՝ որ աշեղծի փակած՝ ոյժ և իշխանութիւն կու տան այդ կանոն, որոյն թէ ինչպէս բողոքին կը հաւատան, բողոքն իսկ հպատակին: Իսկ մեք ոչ միոյն վերայ կարող ենք յենուլ՝ առանց նախ զատելու պղտորը յատակէն, որ « մեք հաւատարիմ համարիմք զկանոնադիրս մեր ի նախնեաց առ մեզ հասեալս » (Արեւ. աղբեւ. Մխիթարեան Ազմ. ժող. հայ. եկեղ. յէջ 19) ըսելով միայն չենք:

1. Մտթ. ժթ 3: — 2. Հարցմունք և պատասխանք Աթանասի. — կանոնք Ս. Բարսեղի: — 3. Ագոր նման է ս. Ներս. պարթևիկ համարուած կանոնաց եօթներորդը, և Շահապովանու Ա ժողովոյն արուածոց չորրորդը, որոյ մէջ սակայն յանցաւոր ամուսնոյն ապաւայ վճիռն անորոշ թողուած է: Բայց այդ և այդպիսի անտարաններդիմ կանոնաց հարցաւորութիւնն ընգուենելի չէ մեզ բնաւ. որչճուտութիւնը մեզ թող չաբար՝ մեր գրչապրաց վերայ կոյր վատահութեամբ յեցած, մեր հարց և ժողովոց կանոններն անոնց ներկայացուցածին պէս ընդունել. այն գրչապրաց, որոց մէջ

տել, որ է՝ ուպահանութեան մէջ թուալելու և յարտեան կորնչելու մի վիճակի։ Աստուած անգամ այդ բանը շնորհ երկրիս վերայ. այլ է որ սպառէ միդաւորի դարձին։ Աստի ստացան մարդիկ այդ գերատուութեան իշխանութիւնը՝ պատասպարտելու զմեղաւորն այդ անփոփոխ և յարատանջ կենաց։ Այլ վստահացոյց զձեզ որ նա պիտի չգտանայ իւր մտար ճանապարհէն. և երբ դառնոց և պահանջէ իւր կիներ և կամ կրկին ամուսնութեան հրաման, ինչ արդարութեամբ պիտի մերժէք իւր խնդիրը, կամ ի՞նչ վճիռ պիտի տայք... Ինչո՞ք կը դանդաղիք, ո՞վ իմաստունը, և ի՞նչպէ՞ս պահարգանք ընդունել, և առն ու կնոջ երկիցս և երիցս ամուսնանալու հրաման տուլ, քան թէ խախտել և թիրեղ ունեւորանի օրէնքը... Եւ այսպիսի անլուր և օտար օրէնսգրութեան մ'առջև է՝ որ կ'աղաղակէ Մահնապար. « Ո՞վ կ'ընայ չբանչանալ այս վարդապետութեան վրայ » (1)։ — ամէն մարդ՝ բաց ի քեզմէ։

« Կեր նախնիքները, կը գրէ Արփիար, իրենց ժամանակին համեմատ արդարութեան և օգտակարութեան գաղափարները (թերևս այն արդարութեան և օգտակարութեան՝ զոր Աստուած չտեսու, քերք ամուսնութիւնը անլուծանելի՝ հաստատոց, և Արփիար միայն տեսաւ,) իրարու հետ հայտնեցին ուզած են ամուսնական կարգադրութեանց մէջ » (2)։ Եթէ ունեցած ես այդպիսի նախնիներ, — արժեքնե՞ս իմ պատուաւոր նախնեաց մէջ այդպիսի մարդ չէ եղած՝ ինչպէս ըսիք, — ասակոյ՞ քոյր թէ գիտութեամբ կամ յանգէտս մտորած են անոնք ճշմարտութենէն։

« Հայ ամուսնական վիճակը, կը գրէ անժամօթ ոմն գաւառական քաղաքէ մի. ներկայ դրութեան (անլուծութեան) մէջ. — չէ կարող ժտալայել ոչ աւետարանի և ոչ ազգախօսական փիլիսոփայութեան » (3)։ Այն աւետարանի և փիլիսոփայութեան, որոց անունաց մէջ ամենախոր հմտութիւն ունին ձեզ նմանիք։

Երոյն կը յաւելու. « Ի՞նչ մի թէ հայը տեւի՞ր Գրմեանդ քրիստոնեայ է քան երկրիս 295 միլիոն միւս քրիստոնեաները, ուրոց մեծագոյն մասը այսօր ամուսնալուծութեան գրութիւնը կը գործարդէ »։ Չերմեանդ քրիստոնեայ՝ ճիշդ Հայրենիքի կուսակցութեան խմբագրապետի նման, որոյ քանի մի տարի առաջ մի և առաջին անգամ յեկեղեցի մտնելն կամ մտնել կարծուիին՝ ան-

ցեայ տարւոյ երկրաշարժէն աւելի մեծ ազմուկ հանեց կ. պոսի մէջ։

Գ. Երոյն յօդուածագիրը կը հարգնէ. « Ո՞վ է որ վերջապէս պիտի կարողայ միջոց արձակել այս մասին կողերը. այդ ամուրի կողերը, ան որ կին չունի »։ — Ոչ. այլ այն աշխարհականը, որք բռնած են միջին մի ճանապարհը՝ ընդ մէջ ամուրեաց և ամուսնացեաց։

Հօրոյ ևս կը գրէ. « Հոգեւոր բարձրագոյն իշխանութեան... ներկայացուցիչները՝ ամուրի անձեր բլլալով՝ ինքզինքնին ազատ կարգացած անուսնական այլ և այլ պատարաններէ, անկարելի է՝ որ իրենք իրենց մտաւճիգ պան այն հարկը... » (4)։ Դատ ուղիղ խօսեցար. զձեզ զրոյո՞ք՝ ձեզ առաջնորդո՞ք՝ ձեր « այլ և այլ պատարաններն » են, և ոչ թէ միտք կամ կրօնք. — այնչափ տաղնապած էք, որ ձեր յուզածք ակամայ զուր կուտայք։ — Արդեօք յառաջադիմութիւնը կը պահանջէ՞ որ այսուհետև պատարանները վարեն զմարդկութիւնը... »

Եր. Ստեան այլ կ'ընէ՝ Քրիստոսէ առաջ « երբեք յոնքը դեր մը չունէր ամուսնութեան մէջ » (5)։ — Յօգուածիդ մէջ երկու ատղ վեր պատմած ես՝ թէ կնոջ ամուսնական անհրաւտարմութիւնը հրէից մէջ կը քննէր քահանայն, որ և ի նմին ժամանակի կ'արարացնէր կամ կը պատժէր զնո՞ւ հողախառն լրոյն արուցմամբ։ Այդ բանն ակնյայտի նշան չէ՞ թէ ամուսնական օրինաց պահպանութիւնն ի սկզբանէ կրօնից յանձնուած է։ Պարոն, եթէ այդչափ կարծատես ես՝ որ երկու ատղ վեր գրածդ չես տեսներ, ակնոց պակաս է։

Դու ինքն այս խօսքովդ, « նահապետական ժամանակներուն մէջ զեւ ամուսնութիւնը խորհարդ ևր չէր », կը խոստովանիս՝ թէ այժմ խորհուրդ է, — արդէն քեզմէ առաջ աւաքեալը վկայեց՝ թէ խորհուրդ է և մեծ խորհուրդ (6) — Եթէ խորհուրդ է, անոր անթիւնը մեկնելու և անոր վերաբերեալ օրէնքներն առաջաննելն աշխարհականաց սեպահական կը իննի՞ թէ եկեղեցւոյ։ Բայց մենք չենք զարմանար. վասն զի ձեր պարտքն է այդպէս խորհել և խօսել։

Ի. Հայրենիք տեպէ կը կրկնէ՞ թէ ապա հարգանք յոյժ կարևոր է՝ դատաւարի տառապեալ ժողովրդեան համար մանաւանդ, և այդ բանը « զեր ի վերայ կը տեսնէ քան կրթական, քան ուսումնական խնդիրները (7) »։ Յերաւի անուրանալի է գաւառաց մէջ ա-

մուսնական վիճակին խղճակի կացութիւնը: Բայց կովկասեան Հայոց ազգասէր Նանիք հրատարակած վիպերը, որք քալ կը նկարազրեան գաւառացի ողորմ վիճակը, կը ցուցնեն մեզ՝ թէ ապահարզանի անգոյուծիւնը չէ այն ոգիտոյց պատճառ, այլ պակասութիւնը կրօնական դաստիարակութեան և մոռացունէն եւ կեղծեցական կարգից: Այն կողմեր առ Հասարակ կը տիրէ ազիտութիւն ամուսնական կողման բարձրութեանը, յախուռն և անխորհուրդ ամուսնութիւնը ամէն օրը, և առայ աբազ ապառաչ: Եւ այդ ամէնն անոր համար է՝ վանդի հայ ժողովուրդն Հայրենիքի պէս կը խորհի և կը դատէ զամուսնութիւնը և ոչ ըստ քրիստոնէի: որովհետեւ լուծի քրիստոնէական բարձր կրթութիւն և քրիստոնէական ժօն՝ միայն որովհետեւ անկի զըզայականութիւնը կ'իշխէ իւր անձուկ — թէպէտ և երբեմն երկիւղած — մտաց վերայ՝ քան հոգեկանութիւնը:

Հայրենիք փոխանակ Պարիսու կեղտոտ փողոցներէն քաղելու այնպիսի վիպեր, որոց օգուտն ու նպատակ իրեն միայն ժանօթ են, ուսկից վարձած է նա և ապահարզանի դադափարը, եթէ փոքր ինչ զոհէր իւր անզին ժամանակը՝ ակնարկելու նարայիշեակ գաւառական վիպաց, կարող պիտի լինէր ըմբռնել մեր ըսածին էջմարտութիւնը, գաւառաց թուաութեան պատճառը: Երբ գաւառացի մնողք անզէտ քրիստոնէական ամուսնութեան իսկութեանը կղերիքն քան զիրենք օգիտութեան պատճառաւ, ոչ իրենք և ոչ քահանայք նախապէս չեն ուսուցաներ իրենց գաւառացի՝ անոր էութիւնը և յարակից բոլոր դժուարութիւնները, և նշանակութիւնն այն նուիրական խոստման զոր իրենց պատմման ժամանակ պիտի կատարեն սրբազան սեղանոյն առջև՝ բոլոր կենաց մեջ յօտարութեամբ տանելու միմեանց վշտերն ու տառապանքները, — երբ ծնողք գաւառաց վերայ կը նային իրեն իրենց եզին և ոչխարին վերայ, և առանց յարգելու անոնց աստուածատուր և քրիստոնէական ազատութիւնը ամուսնոյ ընտրութեան մէջ, շահասիրութեամբ կուրացած՝ կը պատկեն չարքանի հետ կամ կը զրկեն սիրածէն, կամ կու տան մի ամուսնոյ՝ զոր նա ընաւ չճանայեր, և կը վաճառեն զանոնք քան եթէ կ'ամուսնացնեն, և քահանայն ևս սովորին փայլով բլլակնամ՝ կ'օրհնէ անոնց արտասուացող պսակը, և ցկեանա թըշուաութեան կամ վաղաքսա մահուան կը դատապարտէ զանոնք, — ոչ ապաքէն յանցաւոր և պատասխանատու՝ այդ յետամիտ մնողքն են, և անոնց գործակից հանդիսացող քահանայն, և այդ քահանայն ձեռնադրող

եպիսկոպոսը, և այդ եպիսկոպոսը ձեռնադրող... միով բանիւ քրիստոնէական և քաղաքական դաստիարակութեան պակասութիւնը, և ոչ թէ աւետարանի օրհնէքը: Հայրենիք եթէ կարողութեան ունենար նկատելու այս բոլորը, այժմ տարրի կերպով կը նայէր ամուսնութեան վերայ:

Կայ դարձեալ տեսակ մի՝ ամուսնութիւն, յօտարակամ՝ բայց զգայական միայն, պտուղ նոյնպէս կրօնական դաստիարակութեան չըզոյութեան: Մարդկային ամուսնութեան մէջ Աստուած սահմանած է և առաքեալն այլ ստէպ կը պահանջէ՝ սեր, այն սուրբ և վառ սէրը՝ որ պատկերն է Քրիստոսի առ եկեղեցին ունեցածին (1): Առանց ազոր կտուրբուծած ամուսնութիւնը չեն տարբերի անասնոց կատարածէն. և որովհետեւ այդ վիճակ քնական չէ բանաւոր մարդոյն, անոր համար իսկոյն պէտք կը զգայ խզել զայնպիսի ամուսնութիւն՝ ամուսնակցին ութամեայ տաճար նակրի աշխատութեան մի կամ ցկեանա աքտորման գաղտարտուելուն, կամ մարմնաւոր անբուժելի հիւանդութեան, կամ խելազարութեան և նման պատճառաց, կամ բարեաց անհամամայնութեան համար. ուր ուղիղ սէրն այդ ամուսնու պիտի յաղթէր, որոջ օրինակներն անթիւ են երկրիս վերայ և պատմութեան մէջ:

Բայց մեք չենք համարիր՝ թէ կրօնական դաստիարակութեամբ ամուսնութեան միջէն յորտրոյին վերանս դառնութիւնք ինչպէս և ոչ Հայրենիք՝ տապահարզանի ընդունելութեամբ (2): Բայց քնութեան մէջ այս կարգն այլ կայ, որ Հասարակաց օգտակար մի օրինաց պահպանութեան համար ոմանք պարտին կրել: — յայտնի է՝ թէ ամուսնութեան մէջ ոչ բոլորովին ձրի, այլ իրենց սխալ ընտրութեան համար. — ինչպէս ոմանք, թէպէտ և անմեղ, պատերազմի մէջ կուտելով կը մեռնին, որպէս զի բոլոր աշխարհը խաղաղ և երջանիկ պարի:

Թ. Շահնազար կը գրէ. « Օգտակարը (ապահարզանը) փնտռենք, ահա ձգտումը: Օգտակարը եթէ հակառակ է կրօնական կարծիքներու, որո՞նք պէտք է առաջնութիւն տալ (3) »: — Մեր կանխակալ համոզումն թոյլ չտար մեզ կարծել թէ աւետարանաբուրդի կրօնական կարծիքներն օգտակարին հակառակ լինին. մեք այդ ժամանակ կը ստիպուէինք հետեցնել՝ թէ այդ օգտակարը կարծեք միայն օգտակար է, բայց իրք զնա

1. Եփես. Ե 36. — 2. Իւր խօսքը յետոյ պիտի տեսնենք: — 3. 21 փետր.

ասկար: Մենք ձեր հասած լուսաւորութեան այն դազաթը դեռ չենք հասած՝ որ կրօնքը փաստակար դաւանիւք, ըստ որում կերակուր կամ մարմին չէ այն: Մեր ազգի մէջ պղպիսի թերաններ շատ կան, որոց սխալը կրօնքը կղեւրէն շղանազանն է. եթէ կղերի մի մասն փաստներ կը գործէ, ադոր պատճառն՝ անոր ընդ կրօնից զոյգ շնթմանայն է, և ոչ թէ կրօնքը կը թերադրէ անոնց փաստ գործել. այդ թիւր կարծիքը՝ կրօնքը շնանաշնու արդիւնք է: Քայց Շահնազարի դիտաւորութիւնն այդ կէտի մէջ չէ, այլ ուղղակի աւետարանի պատուէրը փոխել տարու մէջ: «Նոյն իսկ Պօղոս առաքելն ալ, կ'ըսէ, կ'աշխատէր յանոնեօ տակարորեան շատ բաններ արտօնել⁽¹⁾», թոյլ տալով ամուսնանալ որոնք կուսութիւն չէին կարող պահել: Շատգէտ պարոն, կուսութիւն և ամուսնութիւն հաւասարապէս կրօնական կարծեաց համաձայն են. կրօնքը երկուքն այլ նուիրականացուցած է. այլ է՝ թէ առաջնոյն աւելի յարգ տալով: Ապահարգանն այնչափ կը համաձայնի այս երկրորդ կէտին՝ հետ, որչափ ձեր միտքն աւետարանի հետ:

Քայց զուք իսկ համոզուած էք՝ թէ ապահարգանն օգտակար լինի: Մի օրագրի այս առարկութեան դէմ՝ թէ «արդեօք Յրանսայի կամ Ամերիկայի մէջ ամուսնալուծութեան հաստատմամբը ընտանեկան բարոյականութիւնը աւելի՞ զարգացած է՝ քան թէ Սպանիոյ կամ այլ երկիրներու մէջ ուր ամուսնալուծութիւն չի կայ», Հօրոյ շուրանար զայն, այլ կը պատասխանէ՝ իբր արգահատելով մի անոր ընդունայն խզմտութեան վերայ. «Քարեկամ, ամուսնալուծութիւնը ամուսնական բարոյականը վերականգնելու համար չէ որ հաստատուած է, այլ ընտանեկան կենսակցութեան մէջ պատահած

անիրարարիւնները, զրկանքը, տատապանքը ըստ կարի թերեցեկոս համար» (2): Այսինքն, փոյթ չէ՝ թէ ապահարգանի հաստատութեամբ ամուսնական բարոյականութիւնը կործանի մեր ազգի մէջ: փոյթ չէ՝ թէ ընտանեկան յարկին սրբութիւնն ու յարգը ընդուի, և սկսիւք այնուհետև առաւօտը ամուսնութիւն կնքել և երկկոյիս ապահարգան խնդրել. — աւելին չըսելու համար. — փոյթ չէ՝ թէ անբաւ յայտնի և զաղտնի, մանաւանդ գաղտնի, եղենազորութիւնք սկսին տեղի ունենալ մեր մէջ՝ քնական և դրական օրինաց դէմ. ազգի անունն դանդաղի կամ զաղրի և սկսի յետո երթալ. զաւակաց խնամքն ու դաստիարակութիւնն իսպառ վերանան. մարմնոց և հոգեոց անթիւ կուրտաններ լինին. ոչ, փոյթ չէ. բաւ է՝ որ ամուսնիք իբրմէլ գատուին երբ կ'ուզեն, և այնու անոնց մէջ ծագած անիրարութիւնք, զրկանք և տառապանք վերջանան, ոչ բոլորովին՝ այլ ըստ կարի: Ինչ «մարդանէր սկզբունք Հայրենիքի»:

Որովհետև «այտօրուան քաղաքակրթութիւնը շնորհուհիք թէ աշխարհա արտաստաց ձոր մըն է... այսօր լուսաւորեալ աշխարհի գիտնական, իմաստասէր գրիչները՝ մարդկութիւնը երջանակ ընելու գաղափարին հետև մուտ են» (3): — Մեր մամերն երբ մեր բերաններէն դպրոցի մէջ սերտած պղպիսի անհասկանալի բառեր և իմաստներ լսէին, կը պատասխանէին. [եզուդ պահենմ]:

Եւ Հայրենիք իւր ճարտասանութեամբ և կարծեցեալ փաստերով ցարդ ուրիշ բան չըրաւ, բայց եթէ ըստ Հօրոյ՝ «ամուսնալուծական խնդրին չառ զարկ մը տուա» և գետին տապալեց. — Ոյժ կը մարթենք՝ որ իւր զարկը կրկնէ այդ փաստապարտ խնդրոյն վերայ՝ մինչև հոգին փչէ:

ՀԱՅՈՒՆԻ

1. 31. փետր.

2. 3 Դեյիտի. — 3. Աճք.

